ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ս. Ս.

Էթնիկ ինքնության և Սփյուռքի պահպանման համար խիստ անհրաժեշտ է հայրենիքի առկայությունը և դրա ընկալումը: Հայրենիքին նշանակությունը և հայրենիքի հետ կապը կարևորագույն դեր ունեն սփյուռքյան ինքնության ձևավորման գործում[1]: Ընդ որում, այդ կապը կարող է լինել երևակայական, ինչպես նաև կորուսյալ՝ պատմական հայրենիքի կամ ազգային պետության հետ: Սփյուռքի համար հայրենիքը դիտարկվում է որպես տուն, վայր, ուր ցանկալի է կամ պետք է ի վերջո վերադառնալ[2]: Չնայած Սփյուռքի քիչ ներկայացուցիչներ կվերադառնան հայրենիք, սակայն ինքնության պահպանման և հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունների համար հույժ կարևոր է վերադարձի գաղափարը[3]:

Հայրենիքի մասին պատկերացումները տարբեր են նաև հայկական Սփյուռքում: Սփյուռքահայերը կարող են «հայրենիք» համարել իրենց կամ ծնողների/նախնիների ծննդավայրը, ընդունող երկիրը, պատմական հայրենիքը (Արևմտյան Հայաստանը), Հայաս-տանի Հանրապետությունը և այլն: Սակայն, ազգային պետության գոյությանը, նրանց մեջ ձևավորում է «իրական հայրենիքի» գաղափարը, որտեղ ապրում է էթնոսի պատմամշակութային կերպարը: Հետևաբար, Սփյուռքը գիտակցում է Հայաստանի հետ կապի կարևորությունը՝ որպես իր գոյության և ազգային ինքնության պահպան-ման առանցքային գործոն: Հայրենիք-Սփյուռք կապի առանձնահատկությունները լա-վագույնս արտացոլվում են էթնիկ մեդիայում[4]: ՏՀՏ միջոցների արդի ժամանակներում մեդիայի միջոցով աշխարհագրորեն հեռու հայրենիքը կարող է ձևավորել և պահպանել սփյուռքյան ինքնությունը: Էթնիկ մեդիայի սպառումը Սփյուռքին հնարավորություն է

---

[1] **Butler K.** *Defining Diaspora, Refining a Discourse (Diasporas, vol. 10, N 2, 2001, p. 201).*

[2] **Brubaker R.** *The "Diaspora" Diaspora (Ethnic and Racial Studies, vol. 28, N 1, 2005, pp. 1-19).*

[3] **Rios M., Adiv N.** *Geographies of Diaspora: A Review, UC Davis Center for Regional Change, Davis, CA, 2010.*

[4] *Էթնիկ մեդիա է համարվում լրատվամիջոցը, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ և լեզվական փոքրամասնությունների, ինչպես նաև տեղաբնիկ-ների համար և նրանց կողմից: Տե՛ս* **Matsaganis M. D., Katz V. S., Ball-Rokeach S. J.** *Understanding Ethnic Media: Producers, Consumers, and Societies, SAGE Publications, Inc., 2011, p. 10:*

տալիս ապատարածականացնելու հայրենիքը[5]: Մեդիան առանցքային դեր է խաղում՝ ամրապնդելով Սփյուռքի ներկայացուցիչների կապը տարածքի՝ հայրենիքի հետ: Այն վերարտադրում է հայրենիքի տարածքը և էթնոմշակութային պրակտիկան, որն էթնիկ խմբի անդամները կիրառում են թե՛ անձնական, թե՛ հանրային կյանքում:

Հայկական Սփյուռքի մամուլում հայրենիքի ընկալման առանձնահատկությունները վեր հանելու նպատակով կատարված ուսումնասիրության[6] մեջ վերլուծվել են Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի պարբերականները (համապատասխանաբար՝ «Ноев Ковчег», «Ալիք» և «Ասպարեզ»)՝ ընդգրկելով այդ պարբերականների վեց տարվա (2005-2010 թթ.) հրատարակությունները՝ ներկայացուցչական ընտրանքով[7]:

Հայկական մամուլում տեղ գտած՝ հայրենիքի և Սփյուռքի մասին տեղեկատվական նյութերի համադրական վերլուծությունը բացահայտում է հայրենիքի կերպարը ներկայացնելու և Սփյուռքի կողմից դրա ընկալման առանձնահատկությունները: Նշված պարբերականների բովանդակության վերլուծությունը բացահայտում է այն իրողությունը, որ էթնիկ մամուլը լուսաբանում է առավելապես հայկական տեղեկատվություն: Այսպես. հայկական թերթերի նյութերի ընդհանուր ծավալի մեջ հայկական թեմաների[8] տեսակարար կշիռը կազմում է մեծամասնություն «Ասպարեզում» (73.9%՝ թերթի ուսումնասիրված համարների նյութերի մեջ) և «Ալիքում» (66.9%), իսկ գրեթե կեսը՝ «Ноев Ковчег»-ում (48.1%):

Հայկական տեղեկատվությունն իր հերթին կարող է վերաբերել Հայաստանին, տվյալ համայնքին կամ ողջ հայկական Սփյուռքին, ինչպես նաև հայրենիք-Սփյուռք առնչություններին: Ինչպես ցույց են տալիս հետազոտության տվյալները, Սփյուռքի երեք համայնքների մամուլը հիմնականում իրականացնում է միավորող գործառույթ[9]՝

---

[5] **Kang T.** *Homeland Re-territorialized: Revisiting the Role of Geographical Places in the Formation of Diasporic Identity in the Digital Age, Information, Communication & Society, Volume 12, Issue 3, 2009, pp. 326-343.*

[6] *Հետազոտությունն իրականացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժինը՝ «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակում, 2011-2013 թթ.:*

[7] *Հետազոտության մեթոդաբանությունը հանգամանալից ներկայացված է հեղինակի՝ «Հետազոտության մեթոդի ընտրության հիմնավորումը» հոդվածում: Տե՛ս Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանին սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ, Ե., 2012, էջ 26-43:*

[8] *Հայկական թեմաներ են համարվել ՀՀ-ին (ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղը), հայկական Սփյուռքին, հայ անհատներին և ընդհանրապես հայությանը վերաբերող նյութերը:*

[9] *Էթնիկ խմբի համար էթնիկ մամուլն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ միավորող, կողմնորոշող և խորհրդանշական: Միավորող գործառույթի միջոցով էթնիկ մեդիան կապում է*

կենտրոնանալով հայրենիքի մասին տեղեկատվության վրա: Սեփական համայնքների և հայկական Սփյուռքի վերաբերյալ տեղեկատվությունը զգալիորեն զիջում է հայաստանյան լրատվությանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են հայրենիք-Սփյուռք հարաբերություններին (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Հայրենիք-Սփյուռք թեմաների համամասնությունը Սփյուռքի մամուլում (տեսակարար կշիռը հայկական թեմաների մեջ, %)

Սփյուռքի մասին տեղեկատվության ծավալը ցույց է տալիս՝ որքան կայացած և ինքնակազմակերպված է համայնքը, այնքան մեծ է մամուլում նրա մասին տեղեկատվության տեսակարար կշիռը: Տվյալների վերլուծությունը վկայում է հայրենիքի և Սփյուռքի մասին թեմաների ծավալի և դրանք ներկայացնելու գնահատականների միջև առկա անհամաչափության մասին: Որքան շատ են Հայաստանի մասին հրապարակումները, այնքան ավելի քիչ է դրանց դրական ներկայացումը(տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Հայաստանի մասին մամուլի հրապարակումների երանգավորումը[10] (տրված գնահատականի տեսակարար կշիռը, %).



Սփյուռքին հայրենիքի հետ՝ ներկայացնելով այնտեղ տեղի ունեցող լուրերն ու իրադարձությունները: Տե՛ս Matsaganis M. D., Katz V. S., Ball-Rokeach S. J., *նշվ. աշխ., էջ 67:*

[10] *Նյութերը գնահատվել են ըստ մամուլի ներկայացման՝ դրական-չեզոք/ համակցված-բացասական սանդղակով:*

Այսպիսով, չնայած հայրենիքի մասին տեղեկատվության գերակայությանը, այն առավելապես ներկայացվում է չեզոք գնահատականներով և վերաբերմունքով: Այս ծավալով և ձևով հայրենիքը ներկայացնելը կարող է սփյուռքահայերին փոխանցել Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրը (հաճախ հայերենով), նրանց կյանքը սրփյուռքի տարբեր համայնքներում զուգահեռել Հայաստանի հետ, վերացնել հայրենիքի և Սփյուռքի կտրված սահմանը: Սակայն այն չի խրախուսի հայրենիքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում ակտիվ ներառվելու վարք, առավելապես՝ հայրենադարձություն:

Հայրենիքը ներկայացնելու համար կարևոր են նաև լուսաբանվող թեմաների տեսակը և համամասնությունը: Դիտարկված երեք համայնքների մամուլում Հայաստանի մասին գերակշիռ թեմաները քաղաքական են (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հայրենիքի մասին սփյուռքի մամուլի հրապարակումների թեմաները[11] (թերթի հայկական թեմաների մեջ տվյալ ոլորտի տեսակարար կշիռը, %)

Թեմա	«Ноев Ковчег»	«Ալիք»	«Ասպարեզ»
Քաղաքականություն	92.3	87.6	74.5
Տնտեսություն	38.4	9.3	13.2
Սոցիալական ոլորտ	8.6	3.8	5.8
Մշակույթ	29.1	25.3	32.1
Բարեգործություն	1.2	1.3	0.7
Ազգային հարցեր	2.0	5.9	2.7
Իրավական դաշտ	4.6	3.4	5.9

Հայրենիքի մասին տեղեկատվության մեջ քաղաքական թեմաների գերակշռությունը վկայում է տվյալ ոլորտով Սփյուռքի ավելի մեծ հետաքրքրության մասին: Ի լրումն Սփյուռքի համար ավանդական մշակութային թեմաների՝ Սփյուռքի ժամանակակից մամուլն իր խորհրդանշական գործառույթը[12] կատարում է հենց քաղաքական թեմաների մատուցման շրջանակներում:

Այսպիսով, Հայաստանի մասին տեղեկատվության սպառումը կապում է էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնում է պահպանել մշակույթը և լեզուն: Հայրենիքի մասին տեղեկատվության գերակշռությունը վկայում է հայկական Սփյուռքի ձգտումը՝ մշա-

---

[11] Աղյուսակում ներկայացված ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

[12] Խորհրդանշական գործառույթի միջոցով էթնիկ մեդիան տարածում է արժեքներ, գաղափարներ, պահպանում կամ ձևավորում է էթնիկ ինքնությունը: Տե՛ս Matsaganis M. D., Katz V. S., Ball-Rokeach S. J., *նշվ. աշխ., էջ 67:*

կութային երկատվածության իրավիճակում վերադառնալ արմատներին, անցյալին, սփյուռքյան փոփոխվող ինքնությունը դարձնել առավել կայուն: Հայրենիքը դառնում է հայկական տեղեկատվական դաշտի այն առանցքը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են սփյուռքի համայնքերում՝ անկախ նրանց տարբերություններից: Սփյուռքը մասնակից դարձնելով հայրենիքում ընթացող ամենօրյա գործընթացներին՝ մամուլը նպաստում է դրա ինքնության պահպանմանը, էթնոմշակութային արժեքների վերարտադրմանն ու տարածմանը, ամրապնդում է էթնիկ խմբին պատկանելության զգացումը:

РОДИНА В ПЕРИОДИКЕ ДИАСПОРЫ

БАРСЕГЯН С. С.

Резюме

Этническая родина занимает особое место в сохранении идентичности в диаспоре. Восприятие родины и связи с ней играют важную роль в формировании диаспоральной идентичности. Наилучшее отражение эти связи находят в этнических медиа. Результаты контент-анализа периодических изданий (2005-2010 гг.) трех армянских общин – "Асбарез" (Лос-Анджелес), "Алик" (Тегеран), "Ноев Ковчег" (Москва) выявляют роль этнической прессы в сохранении национальной идентичности, воспроизводстве и распространении этнокультурных ценностей.

HOMELAND IN THE DIASPORA'S PERIODICALS

S. BARSEGHYAN

Abstract

The ethnic homeland holds a special place in the preservation of identity in the diaspora. Perception of the homeland and connection with it play an essential role in the diasporic identity construction. Homeland-diaspora relations may best reflected in ethnic media. In the era of information technologies, geographically distant homeland can form and maintain identity in the diaspora through ethnic media. The analysis of publications in press reveals the homeland perception in the diaspora. The content analysis of the periodicals (2005-2010) of three Armenian communities ("Asbarez" in Los Angeles, "Alik" in Tehran, and "Noev Kovcheg" in Moscow) shows that ethnic press, replicating materials about the homeland, promotes identity preservation, reproduction and dissemination of ethno-cultural values, strengthens the sense of belonging to their ethnic community.